ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Հայաստան

# *Հակակոռուպցիոն ծրագիր*

***Ծրագրի նպատակը***` *մեծացնել Հայաստանի պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների դերը կոռուպցիայի դեմ պայքարում: Այս նպատակին հասնելու համար կատարել հետևյալ գործողությունները.*

- *զարգացնել պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների կարողությունները` հակակոռուպցիոն աշխատանքներում ներգրավվելու համար,*
- *խթանել պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների միջև համագործակցություն` պետական կառավարման մարմինների գործունեությունը թափանցիկ դարձնելու համար,*
- *առաջարկել ռազմավարական և ընթացակարգային փոփոխություններ` կոռուպցիայի դեմ պայքարում:*

2003 թ-ին Հայաստանի Հանրապետության կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումից հետո ՀՀ Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց մաքսային օրենսգրքում, «Հարկերի , «Ֆինանսական համախարթեցման , «Գնումների , «Կրթության և «Առողջապահության մասին ՀՀ օրենքներում և քննարկեց «Լոբբիստական գործունեության մասին օրինագիծը: Չնայած այս փոփոխություններին, վերջերս անցկացրած մի շարք ուսումնասիրությունների համաձայն, կոռուպցիայի դեմ պայքարում դեռևս անկում է նկատվում: Հանրային միջոցների սխալ օգտագործումը խոչընդոտում է երկրի տնտեսական և քաղաքական զարգացմանը:

Հաշվի առնելով այս հանգամանքները` Եվրասիա համագործակցություն հիմնադրամը ՀՀ Ազգային ժողովի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի հետ համատեղ 2006 թ. ապրիլ ամսին կազմակերպեց համաժողով, որը համախմբեց իշխանությունների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ավելի քան 300 ներկայացուցիչների` կոռուպցիայի դեմ պայքարում ջանքերը միավորելու և համագործակցություն հաստատելու համար: Համաժողովի արդյունքում մշակված առաջարկներում մատնանշվեց կոռուպցիայի դեմ պայքարում նոր ու մատչելի նախաձեռնությունների մշակման անհրաժեշտությունը: Դրանք ուղղված են պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների կարողությունների զարգացմանը` եռակողմ համագործակցություն հաստատելու, պետական կառավարման մարմինների գործունեության թափանցիկությունն ապահովելու և օրենսդրական փոփոխություններ կատարելու համար:

Այդ առաջարկների հիման վրա, 2007 թ-ին Եվրասիա համագործակցություն հիմնադրամը մեկնարկեց ծրագիր, որն ուղղված է կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների դերի մեծացմանը: Ծրագրի շրջանակներում հիմնադրամը համագործակցելու է պետական կառավարման մարմինների, լրատվամիջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ:

## Կարողությունների զարգացում

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու լրագրողների համար նախատեսված դասընթացները հնարավորություն տվեցին խթանելու հանրային կառավարման գործընթացների թափանցիկությունը: Այդ դասընթացներն ուղղված էին հետաքննական լրագրության զարգացմանը, պետական կառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովմանը, «Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի ու կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային լավագույն փորձի կիրառմանը: Դասընթացներին մասնակցեցին տասներկու թերթերի քառասուն և հասարակական կազմակերպությունների քսաներկու ներկայացուցիչներ:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ կառավարությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1992 թ-ից` Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետնորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

## Համալրել, ընձեռել, հզորացնել

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Նունե Սարգսյան
Ինտերնյուս-Հայաստան

Արտաշես Թերզյան
Investment Bank Trust,
National Bank Trust,
Ռուսաստան

Մարգարիտա Փիլիպոսյան
Հայ օգնության ֆոնդ

Դավիթ Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարանի մշակույթի և քաղաքակրթության կենտրոն

Արա Համազասպյան
«Իզմիրլյան հիմնադրամի երևանյան գրասենյակ

Արսեն Ղազարյան
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

Նրանց ընտրության ժամանակ հաշվի առնվեցին երիտասարդների, կանանց և հասարակության խոցելի խմբերի հետ աշխատելու, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարում ակտիվ գործունեություն ունենալու հանգամանքները: Առավել թափանցիկ կառավարում ապահովելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով դասընթացներ կանցկացվեն նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար:

Վերոնշյալ հարցերի առնչությամբ դրամաշնորհային աջակցություն է տրամադրվել հասարակական կազմակերպություններին, թերթերին և լրագրողական ընկերություններին: Ծրագրային գործողություններում ընդգրկված են մի շարք կլոր-սեղան քննարկումներ և հեռուստատեսային բանավեճեր՝ նվիրված կոռուպցիոն հարցերին: Անցկացվելու է նաև քարոզարշավ՝ ուղղված տեղական իշխանությունների՝ քաղաքացիների դիմումներին արձագանքելու կարողությանը: Հանրապետության վեց մարզերում հանրային իրազեկման աշխատանքներ կիրականացվեն՝ նվիրված «Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքին: Կանցկացվի նաև քաղաքացիների կողմից մոնիտորինգ՝ ուղղված ճանապարհային ոստիկանության, քաղաքացիական ծառայության, դպրոցների ու տեղական կառավարման աշխատանքներին:

### Համագործակցություն

Ծրագրի շրջանակներում ստեղծվելու է հակակոռուպցիոն ցանց, որը բաղկացած կլինի պետական կառավարման մարմիններից, հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների ներկայացուցիչներից՝ այդ երեք կառույցների կողմից համատեղ հակակոռուպցիոն ռազմավարական գործողություններ մշակելու և իրագործելու նպատակով: Եվրասիա համագործակցություն հիմնադրամը համագործակցելու է ցանցի անդամների հետ՝ ցանցի կառուցվածքը կազմելու և ռազմավարությունը մշակելու համար: Ցանցի անդամները, հետագայում կստեղծեն և կղեկավարեն ինտերնետային հակակոռուպցիոն ռեսուրս կենտրոն, որը հնարավորություն կտա հանրությանը հասու դարձնել Հայաստանում ընթացող հակակոռուպցիոն աշխատանքների մասին տեղեկություններին, իսկ կառավարական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ օգտվելու ուսուցողական նյութերից, ուղեցույցերից և այլ ուսումնասիրություններից: Իշխանությունների, հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների ներկայացուցիչների համար նախատեսվում է նաև կազմակերպել ուսուցողական այցեր դեպի Եվրոպա և ԱՄՆ երկրներ՝ հակակոռուպցիոն հաջողված մոդելներն ուսումնասիրելու և նմանատիպ կազմակերպությունների հետ համագործակցություն հաստատելու նպատակով:

### Ռազմավարական և ընթացակարգային փոփոխություններ

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը նախատեսում է դրամաշնորհ տրամադրել հակակոռուպցիոն ցանցին՝ կոռուպցիայի դեմ պայքարում ռազմավարական և ընթացակարգային առաջարկություններով հանդես գալու նպատակով:

*Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝*

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան,
Զարոբյան փ. 56
*Հեռ.*՝ (374 10) 58 60 95
*Ֆաքս*՝(374 10) 58 60 96

info@epfound.am
www.epfound.am